ARFI
ARMENIA FINANCED

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«ԱՌՖԻ» փակ բաժնետիրական ընկերության միակ բաժնետեր «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ տնօրենների խորհրդի նիստի 16.05.2022թ. թիվ 16/05/22 արձանագրությամբ

Փոփոխված է «ԱՌՖԻ» փակ բաժնետիրական ընկերության միակ բաժնետեր «Հայաստանի պետական հետաքրքրությունների ֆոնդ» ՓԲԸ «18» հուլիսի 2023 թվականի N 06/23 որոշմամբ

«ԱՌՖԻ» փակ բաժնետիրական ընկերության տնօրեն

(իրավասու անձի պաշտոնը)

Էդգար Էվոյան

(անուն, ազգանուն, ստորագրություն)

Edgar Evoyan

Digitally signed by Edgar Evoyan
Date: 2023.07.28 15:59:54 +04'00'

ԳՐԱՆՑՎԱԾ Է
ՀՀ կենտրոնական բանկում

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ՝

Digitally signed by Martin Galstyan
Date: 2023.08.30 18:41:33 AMT
Reason: Գրանցած է 23.08.2023թ.

(ստորագրություն)

«ԱՌՖԻ» ՓԱԿ ԲԱԺՆԵՏԻՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ
(ՆՈՐ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՄԲ)

ԵՐԵՎԱՆ 2023

ՆԱԽԱԲԱՆ

Սույն փաստաթուղթը հանդիսանում է «ԱՌՖԻ» փակ բաժնետիրական ընկերության կանոնադրությունը և ընդունվում է Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի, «Բաժնետիրական ընկերությունների մասին» և «Արժեթղթերի շուկայի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն:

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. «ԱՌՖԻ» փակ բաժնետիրական ընկերությունը (այսուհետ նաև՝ Ընկերություն) առևտրային կազմակերպություն հանդիսացող տնտեսական ընկերություն է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է Ընկերության նկատմամբ բաժնետերերի պարտավորական իրավունքը հավաստիացնող և սույն կանոնադրության 10-րդ կետով սահմանված թվով բաժնետոմսերի:
2. Ընկերությունը պատասխանատվություն չի կրում իր բաժնետերերի պարտավորությունների համար: Ընկերության բաժնետերերը պատասխանատվություն չեն կրում նրա պարտավորությունների համար և իրենց պատկանող բաժնետոմսերի արժեքի սահմաններում կրում են Ընկերության գործունեության հետ կապված վնասների ռիսկը:
3. Ընկերության ֆիրմային անվանումն է՝

հայերեն լրիվ «ԱՌՖԻ» փակ բաժնետիրական ընկերություն
կրճատ՝ «ԱՌՖԻ» ՓԲԸ
Ռուսերեն լրիվ՝ Закрытое акционерное общество «АРФИ»
Կրճատ՝ ЗАО «АРФИ»
Անգլերեն լրիվ՝ Closed Joint Stock Company «ARFI»
կրճատ՝ CJSC «ARFI»

4. Ընկերության գտնվելու վայրն է՝ Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան 0010, Հանրապետության 37:
5. Ընկերությունը գործունեության տեսակներն են հետևյալ հիմնական և ոչ հիմնական ներդրումային ծառայությունները.
    1) հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունումը և հաղորդումը.
    2) իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում.
    3) արժեթղթերի փաթեթի կառավարում,
    4) արժեթղթերի չերաշխավորված տեղաբաշխման իրականացում.
    5) արժեթղթերի թողարկման և տեղաբաշխման կազմակերպման հետ կապված ծառայությունների մատուցում.
    6) խորհրդատվության տրամադրումն ընկերություններին կապիտալի կառուցվածքի, կորպորատիվ ռազմավարության հարցերի վերաբերյալ, ընկերությունների

վերակազմակերպման հետ կապված խորհրդատվական և այլ ծառայությունների մատուցումը.

7) արժեթղթերով գործարքների հետ կապված հետազոտությունների, ֆինանսական վերլուծությունների և այլ ընդհանուր ներդրումային առաջարկությունների կազմումը և տարածումը:

6. Ընկերությունը կարող է նաև իրականացնել «Արժեթղթերի շուկայի մասին» ՀՀ օրենքով և ՀՀ կենտրանական բանկի իրավական ակտերով թույլատրելի ցանկացած այլ տնտեսական գործունեություն:

7. Ընկերությունն իրավաբանական անձ է, ունի ինքնուրույն հաշվեկշիռ, կարող է ունենալ իր անվանմամբ կլոր կնիք՝ հայերեն և անգլերեն լեզուներով, դրոշմեր, ձևաթղթեր և կնիքներ՝ այդ թվում համարակալված: Ընկերությունը կարող է ունենալ օրենքով սահմանված կարգով գրանցված ապրանքային և սպասարկման նշաններ:

8. Ընկերությունն իր անունից կնքում է պայմանագրեր, ձեռք է բերում գույքային և անձնական ոչ գույքային իրավունքներ, կրում է պարտավորություններ, կարող է հանդես գալ դատարանում որպես հայցվոր կամ պատասխանող: Ընկերությունն իր գործունեությանը համապատասխան իրականացնում է իր գույքի տիրապետումը, օգտագործումը և տնօրինումը: Ընկերությունն իր պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում սեփականության իրավունքով իրեն պատկանող ամբողջ գույքով:

9. Ընկերությունն իրավունք ունի օրենքով սահմանված կարգով դրամական, արժեթղթերի և այլ հաշիվներ բացել Հայաստանի Հանրապետության և օտարերկրյա պետությունների բանկերում կամ դեպոզիտարիաներում: Ընկերության կողմից գործառնությունները կատարվում են բացառապես անկանխիկ ձևով:

II. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՆՈՆԱԴՐԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԸ ԵՎ ԴՐԱ ՓՈՓՈԽՄԱՆ ԿԱՐԳԸ

10. Ընկերության կանոնադրական կապիտալը 411,000,000 (չորս հարյուր տասնմեկ միլիոն) ՀՀ դրամ է: Այն բաղկացած է 411,000 (չորս հարյուր տասնմեկ հազար) հատ տեղաբաշխված սովորական անվանական բաժնետոմսերից, որոնց յուրաքանչյուրի անվանական արժեքը կազմում է 1,000 (հազար) ՀՀ դրամ: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը լրիվ վճարված են:

11. Ընկերության հայտարարված սովորական անվանական բաժնետոմսերի քանակը կազմում է 500,000 (հինգ հարյուր հազար) հատ բաժնետոմս:

12. Ընկերությունը կարող է փոփոխել (ավելացնել կամ նվազեցնել) իր կանոնադրական կապիտալի մեծությունը, որի մասին որոշումն ընդունվում է բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից:

13. Ընկերությունն իրավունք ունի բաժնետոմսերի անվանական արժեքը մեծացնելու կամ լրացուցիչ բաժնետոմսեր տեղաբաշխելու միջոցով ավելացնել իր կանոնադրական կապիտալը: Ընկերությունն իր գործունեության ֆինանսական արդյունքներն ամփոփելուց հետո կարող է տեղաբաշխված բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման միջոցով ավելացնել կանոնադրական կապիտալը՝ շահույթի մի մասը փոխանցելով կանոնադրական կապիտալ:

14. Ընկերության կանոնադրական կապիտալի նվազեցումը կարող է կատարվել՝ 1) բաժնետոմսերի անվանական արժեքի փոքրացմամբ. 2) բաժնետոմսերի ընդհանուր քանակի պակասեցմամբ, այդ թվում՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում, դրանց մի մասի ձեռքբերմամբ և մարմամբ: Ընկերության կանոնադրական կապիտալը չի կարող նվազեցվել ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված նվազագույն չափից:

III. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԱՐԺԵԹՂԹԵՐԸ

15. Ընկերությունը կարող է թողարկել և տեղաբաշխել բաժնետոմսեր, պարտատոմսեր, ածանցյալ արժեթղթեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր: Ընկերության թողարկվող և տեղաբաշխվող բաժնետոմսերը (այդ թվում՝ արտոնյալ) ու պարտատոմսերը անվանական են և ոչ փաստաթղթային ձևի, եթե թողարկման մասին որոշմամբ այլ ձև չի նախատեսվում: Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերը ոչ փաստաթղթային ձևի են: Բաժնետոմսն անբաժանելի է, բացառությամբ «Բաժնետիրական ընկերությունների մասին» ՀՀ օրենքով նախատեսված դեպքերի:

16. Ընկերությունն իրավունք ունի թողարկել պարտատոմսեր և օրենքով նախատեսված այլ արժեթղթեր:

17. Ընկերության կողմից տեղաբաշխված անվանական պարտատոմսերի սեփականատերերի ռեեստրի վարումն իրականացնում է Ընկերությունը, եթե օրենքով և այլ իրավական ակտերով այլ բան չի նախատեսված:

IV. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ

18. Ընկերության միևնույն դասի բաժնետոմսը տալիս է իր սեփականատեր հանդիսացող բաժնետիրոջը միևնույն իրավունքները: Ընկերության բաժնետերերն ունեն Ընկերության այլ բաժնետերերի կողմից վաճառվող բաժնետոմսերը ձեռք բերելու նախապատվության իրավունք:

19. Ընկերության հասարակ (սովորական) բաժնետոմսի սեփականատեր հանդիսացող բաժնետերն իրավունք ունի՝ 1) մասնակցել ժողովին՝ վերջինիս իրավասությանը պատկանող բոլոր հարցերի նկատմամբ ձայնի իրավունքով. 2) մասնակցել Ընկերության կառավարմանը. 3) ստանալ շահութաբաժիններ Ընկերության գործունեությունից առաջացած շահույթից. 4) առաջնահերթ կարգով ձեռք բերել Ընկերության կողմից տեղաբաշխվող բաժնետոմսերը, եթե այլ բան նախատեսված չէ օրենքով. 5) ստանալ Ընկերության գործունեության վերաբերյալ ցանկացած տեղեկատվություն (գաղտնի փաստաթղթերից բացի). 6) ժողովում իր իրավունքները ներկայացնելու համար լիազորել երրորդ անձի. 7) հանդես գալ առաջարկություններով ժողովում. 8) ժողովում քվեարկել իրեն պատկանող բաժնետոմսերի ձայների չափով. 9) դիմել դատարան՝ ժողովի կողմից ընդունված և գործող օրենքներին ու իրավական ակտերին հակասող որոշումների բողոքարկման նպատակով. 10) Ընկերության լուծարման դեպքում ստանալ Ընկերության գույքի իր հասանելիք մասը. 11) Ընկերության միջոցների հաշվին Ընկերության կանոնադրական կապիտալի ավելացման դեպքում անվճար ստանալ համապատասխան քանակությամբ բաժնետոմսեր. 12) ունենալ կանոնադրությամբ նախատեսված այլ իրավունքներ:

V. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄՆԵՐԸ

20. Ընկերությունում ստեղծվում է պահուստային հիմնադրամ՝ կանոնադրական կապիտալի 15 տոկոսի չափով: Եթե պահուստային հիմնադրամը կազմում է նշված չափից ավելի փոքր մեծություն, հատկացումները այդ հիմնադրամին կատարվում են շահույթից՝ առնվազն 5 տոկոսի չափով, ինչպես նաև Ընկերության նոր արժեթղթերի թողարկման արժեքի և դրանց անվանական արժեքի միջև եղած տարբերությունից ստացվող միջոցներից: Պահուստային հիմնադրամը օգտագործվում է Ընկերության կորուստները (վնասները) ծածկելու, պարտատոմսերը մարելու և բաժնետոմսերը հետ գնելու համար, եթե Ընկերության շահույթը և այլ միջոցները դրա համար չեն բավարարում: Պահուստային հիմնադրամը չի կարող օգտագործվել այլ նպատակների համար:

21. Ընկերությունը՝ բաժնետերերի ընդհանուր ժողովի որոշմամբ, կարող է ստեղծել նաև այլ հիմնադրամներ, որոնք կօգտագործվեն, սոցիալական, մշակույթային, բարեգործական, աշխատանքի խրախուսման, աշխատակիցների բաժնետիրացման, հաստատագրված շահութաբաժինների վճարման կամ այլ նպատակների համար:

VI. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՇԱՀՈՒԹԱԲԱԺԻՆՆԵՐԸ

22. Ընկերությունը պարտավոր է վճարել շահութաբաժիններ, եթե որոշում է ընդունել (հայտարարել է) տեղաբաշխված բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ վճարելու մասին: Շահութաբաժինները վճարվում են Ընկերության զուտ շահույթից (կուտակված շահույթից):

23. Բաժնետոմսերի տարեկան շահութաբաժինների վճարման և շահութաբաժնի չափի մասին որոշումը ընդունվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից՝ Ընկերության խորհրդի առաջարկությամբ:

24. Տարեկան շահութաբաժինների վճարման ժամկետը որոշվում է Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի կողմից, սակայն ոչ ուշ քան յուրաքանչյուր ֆինանսական տարվա հուլիսի 1-ից և ավարտվում՝ շահութաբաժիների վճարման պարտավորության կատարմամբ:

25. Յուրաքանչյուր տեսակի (դասի) արտոնյալ բաժնետոմսի դիմաց վճարվող շահութաբաժինը սահմանվում է ընդհանուր ժողովի կողմից դրամական գումարի տեսքով կամ որպես տոկոսադրույք արտոնյալ բաժնետոմսի անվանական արժեքի նկատմամբ:

VII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԵՏԵՐԵՐԻ ԵՎ ԱՅԼ ԱՐԺԵԹՂԹԵՐԻ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ՌԵԵՍՏՐԸ

26. Ընկերությունը պարտավոր է ապահովել ռեեստրի՝ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով սահմանված կարգով վարումը և պահպանումը:

27. Ընկերության արժեթղթերի սեփականատերերը պարտավոր են Ընկերության ռեեստրը վարողին ժամանակին տեղեկացնել իրենց վերաբերող տվյալների փոփոխության մասին: Նշված տվյալները ժամանակին չներկայացնելու դեպքում Ընկերությունը պատասխանատվություն չի կրում բաժնետիրոջը, ինչպես նաև Ընկերության այլ արժեթղթերի սեփականատիրոջը պատճառված վնասի համար:

VIII. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿԱՌՈՒՅՎԱԾՔԸ

28. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովը կառավարման բարձրագույն մարմինն է: Ընկերությունը պարտավոր է ամեն տարի գումարել բաժնետերերի ընդհանուր տարեկան ժողով ֆինանսական տարվա ավարտից հետո վեց ասվա ընթացքում: Բաժնետերերի տարեկան ժողովից բացի գումարվող Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ: Ընկերության արտահերթ ժողովներ գումարվում են անհետաձգելի հարցերի քննարկման համար:

29. Ընկերության բաժնետերերի ընդհանուր ժողովի (այսուհետև՝ ժողովի) իրավասություններն են՝

1) Ընկերության կանոնադրության հաստատումը, դրա մեջ փոփոխությունների և լրացումների կատարումը,

2) Ընկերության վերակազմակերպումը

3) Ընկերության լուծարումը

4) լուծարային հանձնաժողովի նշանակումը, միջանկյալ, ամփոփ և լուծարման հաշվեկշիռների հաստատումը

5) հայտարարված բաժնետոմսերի ծավալի առավելագույն չափի սահմանումը

6) խորհրդի քանակական կազմի հաստատումը, դրա անդամների ընտրությունը և նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

7) բաժնետոմսերի անվանական արժեքի մեծացման կամ լրացուցիչ բաժնետոմսերի տեղաբաշխման միջոցով կանոնադրական կապիտալի չափի ավելացումը.

8) Ընկերության միանձնյա գործադիր մարմնի ձևավորումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.

9) ժողովի վարման կարգի հաստատումը.

10) Ընկերության աուդիտն իրականացնող անձի հաստատումը.

11) Ընկերության տարեկան հաշվետվությունների, հաշվապահական հաշվեկշիռների, շահույթների և վնասների հաշվի, շահույթների և վնասների բաշխման հաստատումը, ինչպես նաև տարեկան շահութաբաժինների վճարման մասին որոշման ընդունումը և տարեկան շահութաբաժինների չափի հաստատումը.

12) օրենքով նախատեսված դեպքերում շահագրգռվածության առկայությամբ գործարքների կնքումը.

13) օրենքով նախատեսված դեպքերում խոշոր գործարքների կնքումը.

14) դուստր և կախյալ ընկերությունների ստեղծումը.

15) Ընկերության աշխատակիցների բաժնետիրացման ծրագրի հաստատումը.

16) առանձին տեսակների կամ դասերի բաժնետոմսերի դիմաց շահութաբաժիններ չվճարելու կամ արտոնյալ բաժնետոմսերի դիմաց շահութաբաժինները ոչ լրիվ չափով վճարելու մասին որոշումների ընդունումը.

17) բաժնետոմսերի համախմբումը (կոնսոլիդացիան), բաժանումը.

18) դուստր կամ կախյալ ընկերությունների ստեղծումը կամ դրանց մասնակցությունը.

19) Ընկերության կողմից բաժնետերերին տեղեկությունների և նյութերի հաղորդման ձևի որոշումը, ներառյալ զանգվածային լրատվության համապատասխան միջոցի ընտրությունը, եթե հաղորդումը պետք է իրականացվի նաև հրապարակային հայտարարության ձևով.

20) Ընկերության կողմից տեղաբաշխված բաժնետոմսերի ձեռքբերումը և հետգնումը՝ օրենքով նախատեսված դեպքերում.
21) օրենքով և սույն կանոնադրությամբ նախատեսված այլ որոշումների ընդունումը:
30. Ժողովի որոշումներն ընդունվում են ժողովին մասնակցող՝ ձայնի իրավունք տվող (քվեարկող) բաժնետոմսերի սեփականատերերի ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով Ժողովի կողմից ընդունված որոշումները, ինչպես նաև քվեարկության արդյունքները որոշում ընդունելու պահից 45 օրվա ընթացքում պետք է ներկայացվեն բաժնետերերին՝ նրանց պատվիրված նամակներ ուղարկելու կամ առձեռն հանձնելու միջոցով:
31. Ժողովի որոշումները կարող են ընդունվել հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով):
32. Քվեարկությունը ընդհանուր ժողովում իրականացվում է Ընկերության մեկ քվեարկող բաժնետոմս՝ մեկ ձայն սկզբունքով:
33. Խորհրդի իրավասությանն են պատկանում՝
1) Ընկերության գործունեության հիմնական ուղղությունների որոշումը.
2) տարեկան և արտահերթ ժողովների գումարումը, բացառությամբ օրենքով նախատեսված դեպքերի.
3) ժողովների օրակարգի հաստատումը.
4) ժողովներին մասնակցելու իրավունք ունեցող բաժնետերերի ցուցակը կազմելու տարվա, ամսվա, ամսաթվի հաստատումը, ինչպես նաև բոլոր այն հարցերի լուծումը, որոնք կապված են ժողովների նախապատրաստման ու գումարման հետ և վերապահված են խորհրդի իրավասությանը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համապատասխան.
5) սույն կանոնադրությամբ 29 կետի 2), 13), 14), 19), 20) և 21) ենթակետերով նախատեսված հարցերի ներկայացումը ժողովի քննարկմանը.
6) գույքի շուկայական արժեքի որոշումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով.
7) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված կարգով և դեպքերում Ընկերության տեղաբաշխված բաժնետոմսերի, պարտատոմսերի և այլ արժեթղթերի ձեռքբերումը.
8) Ընկերության աուդիտն իրականացնող անձի վարձատրության չափի որոշումը, նրա լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը.
9) Ընկերության արտաքին աուդիտն իրականացնող անձի վճարման չափի սահմանումը.
10) Ընկերության բաժնետոմսերի դիմաց վճարվող տարեկան շահութաբաժինների չափի և վճարման կարգի վերաբերյալ ժողովին առաջարկությունների նախապատրաստումը.
11) Ընկերության բաժնետոմսերով վճարվող միջանկյալ շահութաբաժինների չափի և վճարման կարգի սահմանումը.
12) Ընկերության պահուստային և այլ հիմնադրամների օգտագործումը.
13) Ընկերության կառավարման մարմինների գործունեությունը կանոնակարգող ներքին փաստաթղթերի հաստատումը.
14) Ընկերության մասնաճյուղերի և ներկայացուցչությունների, հիմնարկների ստեղծումը.

15) Ընկերության ղեկավար անձնակազմի նշանակման, վարձատրության չափի սահմանման և աշխատանքային հարաբերությունների դադարեցման վերաբերյալ որոշման կայացում,
16) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված դեպքերում գործարքների կնքումը.
17) «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և սույն կանոնադրությամբ իր իրավասությանը վերապահված այլ հարցերի լուծումը:
34. Խորհրդի անդամներն ընտրվում են տարեկան ժողովի կամ անդամների լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելու դեպքում արտահերթ ժողովի կողմից: Խորհրդի անդամների լիազորությունները դադարում են խորհրդի հաջորդ կազմի ընտրվելուց հետո:
Խորհրդի ընտրվող անդամների քանակական կազմը սահմանվում է ժողովի որոշմամբ, բայց չի կարող պակաս լինել 3 հոգուց:
35. Խորհրդի նախագահին ընտրում են խորհրդի անդամները, խորհրդի անդամների կազմից՝ իրենց ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ: Խորհուրդը կարող է ցանկացած ժամանակ վերընտրել նախագահին կամ ընտրել նոր նախագահ՝ խորհրդի անդամների ընդհանուր քանակի ձայների մեծամասնությամբ:
36. Խորհրդի նիստերը գումարում է խորհրդի նախագահը իր նախաձեռնությամբ՝ խորհրդի անդամի, Ընկերության վերստուգող հանձնաժողովի (վերստուգողի), Ընկերության աուդիտն իրականացնող անձի, Ընկերության գործադիր մարմնի պահանջով: Խորհուրդը կարող է հեռակա քվեարկությամբ (հարցման միջոցով) ընդունել որոշումներ,
37. Խորհրդի նիստերում նախագահում է խորհրդի նախագահը: Խորհրդի նախագահի բացակայության դեպքում նրա պարտականությունները խորհրդի որոշմամբ կատարում է խորհրդի անդամներից մեկը: Խորհրդի նիստերի քվորումը ապահովվում է, եթե նիստին մասնակցում կամ հեռակա կարգով քվեարկում են խորհրդի անդամների կեսը և ավելին: Խորհրդի որոշումներն ընդունվում են նիստին ներկա անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով կամ սույն կանոնադրությամբ այլ բան նախատեսված չէ:
38. Ընկերության ընթացիկ գործունեության ղեկավարումն իրականացնում է Ընկերության միանձնյա գործադիր մարմինը՝ տնօրենը: Ընկերության տնօրենի իրավասությանն են պատկանում Ընկերության ընթացիկ գործունեության կառավարման բոլոր հարցերը, բացառությամբ ժողովի և խորհրդի իրավասություն հանդիսացող հարցերի: Ժողովի կողմից Ընկերության տնօրենին նշանակելուց հետո, Ընկերությունը նրա հետ կնքում է պայմանագիր, որը Ընկերության անունից ստորագրում է խորհրդի նախագահը:
39. Ընկերության տնօրենը՝
1) տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.
2) առանց լիազորագրի գործում է Ընկերության անունից.
3) ներկայացնում է Ընկերությունը Հայաստանի Հանրապետությունում և արտասահմանում.
4) սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում՝ աշխատանքային պայմանգրեր Ընկերության աշխատակիցների և ղեկավար անձնակազմի՝ գլխավոր հաշվապահի և ներքին աուդիտի ղեկավարի հետ.

5) տալիս է լիազորագրեր.
6) բանկերում բացում է Ընկերության հաշվարկային (այդ թվում՝ արտարժութային) և այլ հաշիվներ.
7) հաստատում է կամ խորհրդի հաստատմանն է ներկայացնում Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը, առանձնացված ստորաբաժանումների կանոնակարգերը, Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքը, հաստիքացուցակը և այլ ներքին իրավական ակտերը.
8) իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը.
9) օրենքով և սույն կանոնադրությամբ սահմանված կարգով աշխատանքի է ընդունում և աշխատանքից ազատում Ընկերության աշխատակիցներին, ինչպես նաև աշխատակիցների նկատմամբ կիրառում է խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցներ.
10) Ընկերության վարչակազմակերպական կառուցվածքի հաստատումը.
11) ամենամյա ծախսերի նախահաշվի և դրա կատարողականի հաստատումը.
12) Ընկերության հաստիքացուցակի հաստատումը,
13) Ընկերության գույքի ձեռքբերման կամ օտարման հետ կապված այլ գործարքների կնքումը՝ «Բաժնետիրական ընկերությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերում:
40. Ընկերության անվանմամբ կլոր կնիքը գտնվում է Ընկերության տնօրենի տիրապետման ներքո: Դրա օգտագործման իրավասությունը պատկանում է միայն տնօրենին կամ նրա կողմից լիազորված անձին:
41. Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության նկատմամբ հսկողությունն իրականացնում է ներքին աուդիտորը: Ընկերության ներքին աուդիտորը ղեկավարվում է օրենքով և Ընկերության ներքին աուդիտի կանոններով:

IX. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՈՒՄԸ

42. Ընկերությունը լուծարվում է՝ ա) Ընդհանուր ժողովի որոշմամբ, բ) օրենքներով նախատեսված այլ հիմքերով:
43. Ընկերության լուծարումը կատարվում է ՀՀ քաղաքացիական օրենսգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով:
Ընկերության լուծարման դեպքում բաժնետերերի ընդհանուր ժողովը նշանակում է լուծարման հանձնաժողով (այսուհետ՝«Լուծարմանհանձնաժողով»):
44. Լուծարման հանձնաժողովը.
ա) իրականացնում է Ընկերության գործունեության կառավարմանը վերաբերող բոլոր լիազորությունները,
բ) գնահատում է Ընկերության գույքը,
գ) կատարում է Ընկերության պարտատերերի՝ ներառյալ բաժնետերերի հետ հաշվարկները,
դ) կազմում է լուծարման հաշվեկշիռը եւ ներկայացնում է այն բաժնետերերի ընդհանուր ժողովի հաստատմանը:
45. Ընկերությունը համարվում է լուծարված, իսկ նրա գործունեությունը՝ դադարած այդ մասին պետական գրանցամատյանում համապատասխան գրանցում կատարելու պահից:

46. Պարտատերերի հետ ունեցած հաշվարկների կատարումից հետո Ընկերության մնացած գույքը բաշխվում է Լուծարման հանձնաժողովի կողմից Ընկերության բաժնետերերի միջեւ օրենսդրությամբ սահմանված կարգով:

X ԵԶՐԱՓԱԿԻՉ ԴՐՈՒՅԹՆԵՐ

47. Ընդհանուր ժողովի կողմից Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները եւ լրացումները ենթակա են պետական գրանցման:

48. Կանոնադրության մեջ կատարվող փոփոխությունները եւ լրացումները ուժի մեջ են մտնում պետական գրանցման պահից:

49. ՀՀ օրենսդրության փոփոխության դեպքում, մինչեւ համապատասխան փոփոխությունների կատարումը, Կանոնադրությունը գործում է այնքանով, որքանով չի հակասում տվյալ պահին գործող ՀՀ օրենսդրությանը: